

915, 918 թուականներուն եւ տեսնէ՛ր մեր յեղափոխական առաքեալներն ու զինուորները իրենց բարոյական անհասանելի մեծութեամբ, տեսնէ՛ր մեր զինակիր, ինքնապաշտպան խմբերը, որոնք անհամար շարքերով կ'անցնէին հայրենիքի լեռու ձորերէն եւ ահաւոր պայմաններու մէջ, ամէն վայրկեան մահը աչքերուն առած, կը կատարէին իրենց դժնդակ պաշտօնը, տեսնէ՛ր Սասնոյ, Զէյթունի, Վասպուրականի գեղեցիկ ընդվզումները եւ Փեղալիներու ստորերկրեայ աշխատանքը մութ ու խոնաւ նկուղներում, հազարաւոր վտանգներով չըջապատուած, տեսնէ՛ր հայ ըմբոստներու դաւադրական աքերը, որոնցմէ մէկ քանիսը զարմանք ու հիացմունք յարուցին քաղաքակիրթ ազգերու մէջ, տեսնէ՛ր նոյն ռազմիկներու լէզէնը Կովկասում թուրք-հայկական բախումներու մէջ, եւ ապա տեսնէ՛ր Սարգարապատի, Ղարաքիլիսի ճակատամարտները — որոնցմէ ծնաւ հայոց առաջին Հանրապետութիւնը — տեսնէ՛ր, մի խօսքով, մեր ամբողջ ազատագրական հերոսամարտը վերջին քառսուն տարուան ընթացքին, — պիտի խորհէ՛ր, անտարակոյս, որ «Կայծեր»ի հերոսները գերազանցուած են լայնօրէն, որ հայկական փոքրիկ համայնքը, ցաք ու ցրիւ, դարերով ստրուկ ու հալածական, դարերով անմիաբան ու պառակտուած, դաւամուլ եւ նիւթապաշտ, հրաշներ է գործել ի դէմս իր մարտնչող տարրերու, հրաշներ ոչ միայն անձնագոհութեան ու կորովի, այլ եւ ներքին համերաշխութեան ու համագործակցութեան, պիտի խորհէ՛ր, որ ազգային ազատութեան մեծ գործին լծուել է հայոց պատմութեան մեծագոյն ու գեղեցկագոյն սերունդը...

Այո՛, իրաւամբութիւնը գերազանցեց վէպը եւ այնուամենայնիւ — այստեղ է անողոք ու մտրակող վիշտը, երբ վերստին կը կարգամ «Կայծեր»ը — այնուամենայնիւ, չնայած հայ լէզէններու արիութեան հրաշներուն, որոնք ամենէն արեւոտ եւ յորձանուտ ծովին մէջ քանի մը անգամ մօտեցուցին հայկական նաւը փրկարար նաւահանգստին, անգամ մը նոյնիսկ տարան հասցուցին մինչեւ նաւահանգիստ (1918-ին), չնայած այդ արիւնայի եւ անզուգական դիւցազնամարտին, մենք տակաւին

ճամբու կէսին ենք եւ այս գիրքը յիսուն տարի յետոյ դեռ չէ՛ հինցած, տարաբախտաբար, դեռ չէ՛ մոռցուած, այլ կը պահպանէ յաւիտենական, տխուր, սարսափեցուցիչ այժմէութիւն մը... Բաֆֆին, որպէս քաղաքական, յեղափոխական վիպագիր, չէ մեռեր, չուզե՛ր մեռնիլ. նա ողջ է, ներկայ է ամենուրեք, դաւադարական երիտասարդութեան ժամադրաւայրերում — չէք պիտեան դաժանագէմ եւ պատգամող ուրուականներուն պէս — ներկայ է՝ թէ ցիրուցան գաղութներու եւ թէ նոյնիսկ տրակոնական օրէնքներու տակ հեծեծող բռնաշխարհի հայութեան մէջ... «Սորհրդային Հայաստանի դրադարաններէն հայ պատանիները — աշակերտներ եւ ուսանողներ — շարունակ Բաֆֆի եւ Ահարոնեան կ'ուզեն» — այսպէս կ'ազգարարեն ահագնողի չեւտերով իրենք իսկ հայրենիքի նոր տէրերը...

* * *

Եւ վերստին կը յիշեմ 80-ական թուականները, մեր Sturm und Drang-ի անմոռանալի չրջանը: Մին միւսի ետեւէ հրապարակ կը նետուին Վիպասանի բեղմնաւոր գրչի արտադրութիւնները — Զէյալեղիմ, Խենթ, Կայծեր, Դաւիթ Բէկ, Խաչագողի Յիշատակարանը, Ղարաբաղի Աստղագետը, Սամուէլ եւայն — որոնք անսովոր արագութեամբ կը տարածուէին ու կը սպառուէին. երիտասարդութիւնը անհուն խանդավառութեամբ կը դիմաւորէր իւրաքանչիւր հատորին եւ բառացի կը կլկէր հարիւրաւոր էջերը: Զեռքէ ձեռք կ'անցնէին մանաւանդ «Կայծեր»ը: Օր մը Բարսեղ Զաքարեան — նոյն Շուշուայ արքունական դպրոցի դասընկերս — յուզուած ձայնով ըսաւ ինձի, որ մէկ գիշերուան մէջ վերջացուց այդ գրքի երկու հատորներու ընթերցումը: Սիրուն աչքերը մարեր էին յոգնութենէն եւ բիբերը կարմրեր արցունքներէն: Այդ այն Զաքարեանն էր, որ ատկէ չորս տարի յետոյ, 1891-ին անցաւ Ժընէվ, ընկերային դիտութիւններ ուսումնասիրելու, բայց երկու տարին չանցած, կիսատ ձգեց ուսումը, հրաժեշտ տուաւ իր սիրած համալսարանին, գնաց Աթէնք, Հնչակեաններու կենդրոնը՝ իր ոյժերը տրամադրելու ազատութեան կռուի համար: Եւ ղրկուեցաւ Փոքր Ասիա, Մարզուան...